

**No. 53607\***

---

**Slovakia  
and  
Armenia**

**Agreement between the Government of the Slovak Republic and the Government of the Republic of Armenia on mutual protection of classified information. Bratislava, 11 November 2014**

**Entry into force:** *1 September 2015, in accordance with article 14*

**Authentic texts:** *Armenian, English and Slovak*

**Registration with the Secretariat of the United Nations:** *Slovakia, 20 April 2016*

*\*No UNTS volume number has yet been determined for this record. The Text(s) reproduced below, if attached, are the authentic texts of the agreement /action attachment as submitted for registration and publication to the Secretariat. For ease of reference they were sequentially paginated. Translations, if attached, are not final and are provided for information only.*

---

**Slovaquie  
et  
Arménie**

**Accord entre le Gouvernement de la République slovaque et le Gouvernement de la République d'Arménie sur la protection réciproque des informations classifiées. Bratislava, 11 novembre 2014**

**Entrée en vigueur :** *1<sup>er</sup> septembre 2015, conformément à l'article 14*

**Textes authentiques :** *arménien, anglais et slovaque*

**Enregistrement auprès du Secrétariat de l'Organisation des Nations Unies :** *Slovaquie, 20 avril 2016*

*\*Aucun numéro de volume n'a encore été attribué à ce dossier. Les textes disponibles qui sont reproduits ci-dessous sont les textes originaux de l'accord ou de l'action tels que soumis pour enregistrement. Par souci de clarté, leurs pages ont été numérotées. Les traductions qui accompagnent ces textes ne sont pas définitives et sont fournies uniquement à titre d'information.*

# **Համաձայնագիր**

**Սլովակիայի Հանրապետության  
կառավարության**

**և**

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության**

**միջև**

**գաղտնի տեղեկատվության փոխադարձ  
պաշտպանության մասին**

**Սլովակիայի Հանրապետության կառավարությունը  
և  
Հայաստանի Հանրապետության կառավարությունը,**

(այսուհետ՝ «Կողմեր»),

Ճանաչելով քաղաքական, ռազմական, տնտեսական, իրավական, գիտական և տեխնոլոգիական կամ որևէ այլ համագործակցության շրջանակներում փոխադարձաբար փոխանակվող գաղտնի տեղեկատվության պաշտպանության իրավահարաբերությունների սահմանման անհրաժեշտությունը,

Մտադրվելով ապահովել մեկ Կողմի պետությունում դրոշմագրված և մյուս Կողմի պետությանը փոխանցված բոլոր տեսակների գաղտնի տեղեկատվության փոխադարձ պաշտպանությունը,

Ցանկանալով ստեղծել Կողմերի միջև փոխանակվող գաղտնի տեղեկատվության փոխադարձ պաշտպանության կանոնների ամբողջություն,

Հաշվի առնելով փոխադարձ շահերը գաղտնի տեղեկատվության պաշտպանության բնագավառում՝ Կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան,

համաձայնեցին հետևյալի մասին.

**Հոդված 1  
Նպատակ**

Սույն Համաձայնագրի նպատակն է ապահովել Կողմերի պետությունների միջև փոխանակվող կամ նրանց համագործակցության շրջանակներում առաջացող գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը:

**Հոդված 2  
Սահմանումներ**

Սույն Համաձայնագրում օգտագործվող հասկացություններն են՝

ա) «**Գաղտնի տեղեկատվություն**» նշանակում է ցանկացած տեղեկատվություն կամ նյութ, որը, անկախ իր ձևից կամ բնույթից, պահանջում է չթույլատրված մեքենայությունից պաշտպանություն և որը դրոշմագրվել է Կողմերի պետությունների ազգային օրենսդրությանը համապատասխան.

բ) «**Տրամադրող կողմ**» նշանակում է այն Կողմի պետությունը, որը մյուս Կողմի պետությանը փոխանցում է Գաղտնի տեղեկատվություն.

գ) «**Ստացող կողմ**» նշանակում է այն Կողմի պետությունը, որին մյուս Կողմի պետության կողմից փոխանցվում է Գաղտնի տեղեկատվություն.

դ) «**Անվտանգության իրավասու մարմին**» նշանակում է սույն Համաձայնագրի կիրարկման և վերահսկման համար պատասխանատու ազգային անվտանգության մարմին.

ե) «**Կոնտրակտոր**» նշանակում է գաղտնի պայմանագրեր կնքելու իրավունակություն ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

զ) «**Գաղտնի պայմանագիր**» նշանակում է երկու կամ ավելի Կոնտրակտորների միջև համաձայնություն, որը պարունակում կամ ներառում է Գաղտնի տեղեկատվություն.

է) «**Օբյեկտում կամ հիմնարկությունում գաղտնի աշխատանքի թույլտվություն**» նշանակում է Անվտանգության իրավասու մարմնի որոշումը, որը հաստատում է այն, որ իրավաբանական անձն ունի Գաղտնի տեղեկատվություն օգտագործելու և պահելու ֆիզիկական և կազմակերպչական հնարավորություններ՝ համապատասխան ազգային օրենսդրության համաձայն.

ը) «**Անձնակազմի գաղտնի աշխատանքի թույլտվություն**» նշանակում է Անվտանգության իրավասու մարմնի որոշումը, որը հաստատում է այն, որ, համապատասխան ազգային օրենսդրության համաձայն, ֆիզիկական անձն իրավունք ունի ստանալ Գաղտնի տեղեկատվությունից օգտվելու թույլտվություն.

թ) «**Անհրաժեշտ է տեղյակ լինել**» նշանակում է տվյալ ծառայողական դիրքի շրջանակներում և որոշակի խնդրի իրականացման համար Գաղտնի տեղեկատվությունից օգտվելու թույլտվության անհրաժեշտություն.

ժ) «**Երրորդ կողմ**» նշանակում է սույն Համաձայնագրի կողմ չհամարվող ցանկացած պետություն, կազմակերպություն, իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

ա) «**Գաղտնի տեղեկատվություն**» նշանակում է ցանկացած տեղեկատվություն կամ նյութ, որը, անկախ իր ձևից կամ բնույթից, պահանջում է չթույլատրված մեքենայությունից պաշտպանություն և որը դրոշմագրվել է Կողմերի պետությունների ազգային օրենսդրությանը համապատասխան.

բ) «**Տրամադրող կողմ**» նշանակում է այն Կողմի պետությունը, որը մյուս Կողմի պետությանը փոխանցում է Գաղտնի տեղեկատվություն.

գ) «**Ատացող կողմ**» նշանակում է այն Կողմի պետությունը, որին մյուս Կողմի պետության կողմից փոխանցվում է Գաղտնի տեղեկատվություն.

դ) «**Անվտանգության իրավասու մարմին**» նշանակում է սույն Համաձայնագրի կիրարկման և վերահսկման համար պատասխանատու ազգային անվտանգության մարմին.

ե) «**Կոնտրակտոր**» նշանակում է գաղտնի պայմանագրեր կնքելու իրավունակություն ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

զ) «**Գաղտնի պայմանագիր**» նշանակում է երկու կամ ավելի Կոնտրակտորների միջև համաձայնություն, որը պարունակում կամ ներառում է Գաղտնի տեղեկատվություն.

է) «**Օբյեկտում կամ հիմնարկությունում գաղտնի աշխատանքի թույլտվություն**» նշանակում է Անվտանգության իրավասու մարմնի որոշումը, որը հաստատում է այն, որ իրավաբանական անձն ունի Գաղտնի տեղեկատվություն օգտագործելու և պահելու ֆիզիկական և կազմակերպչական հնարավորություններ՝ համապատասխան ազգային օրենսդրության համաձայն.

ը) «**Անձնակազմի գաղտնի աշխատանքի թույլտվություն**» նշանակում է Անվտանգության իրավասու մարմնի որոշումը, որը հաստատում է այն, որ, համապատասխան ազգային օրենսդրության համաձայն, ֆիզիկական անձն իրավունք ունի ստանալ Գաղտնի տեղեկատվությունից օգտվելու թույլտվություն.

թ) «**Անհրաժեշտ է տեղյակ լինել**» նշանակում է տվյալ ծառայողական դիրքի շրջանակներում և որոշակի խնդրի իրականացման համար Գաղտնի տեղեկատվությունից օգտվելու թույլտվության անհրաժեշտություն.

ժ) «**Երրորդ կողմ**» նշանակում է սույն Համաձայնագրի կողմ չհամարվող ցանկացած պետություն, կազմակերպություն, իրավաբանական կամ ֆիզիկական անձ: